# «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը հաստատելու, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հաստատել ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սահմանել ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

«

**Հավելված 1**

**ՀՀ կառավարության 2017 թվականի**

**________________ «    »-ի N_____-Ն որոշման**

**ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ**

**ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ**

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում հաղորդումները իրավասու անձի կամ մարմնի կողմից հաշվառվում են գրանցամատյանում՝ համաձայն Ձև 1-ի՝ գրանցամատյանում համապատասխան գրառման կատարմամբ:

2. Գրանցամատյանում արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.

2) հաղորդման հաշվառման սերիան, հերթական համարը.

3) հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը.

4) հաղորդմամբ ներկայացված տեղեկության բովանդակությունը.

5) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը, այդ թվում՝ հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը.

6) նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.

7) ազդարարի ստորագրությունը.

8) գրանցամատյանը վարողի ստորագրությունը.

9) հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ:

3. Իրավասու անձը կամ մարմինը համարակալում, կնքում և ստորագրում է գրանցամատյանի բոլոր էջերը:

4. Իրավասու անձը կամ մարմինը վարում է գրանցամատյանի փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակը:

5. Գրանցամատյանին կից պետք է պահվեն նաև գրանցամատյանում արձանագրված տեղեկություններին վերաբերող համապատասխան բոլոր փաստաթղթերի պատճենները:

Ձև 1

# Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

## ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

| Հ/Հ | Հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը | Հաղորդման հաշվառման սերիան, հերթականհամարը | Հաղորդումը ներկայացրած անձի անունը,ազգանունը և հայրանունը | Հաղորդմամբ ներկայացված տեղեկության բովանդակությունը | Հաղորդման առնչությ ձեռնարկված միջոցն ամբողջական նկարագի թվում՝ հաղորդման առնչ ձեռնարկված միջոցն արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |

---

Կ.Տ.

**Հավելված 2**

**ՀՀ կառավարության 2017 թվականի**

**_______________ «    »-ի N_____-Ն որոշման**

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

**ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

1. «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան ազդարարն ունի իր անձնական տվյալների գաղտնիության, վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք:

2. «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ազդարար ֆիզիկական անձին տրվող պաշտպանությունը տարածվում է ազդարար իրավաբանական անձի վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությամբ կիրառելի է դրա նկատմամբ;

3. Ազդարարման դեպքում ազդարարի անձնական տվյալները չբացահայտելու նպատակով փաստաթղթաշրջանառությունը կատարվում է իրավասու մարմնի կողմից նշանակված պատասխանատու անձի միջոցով:

4. Հիմքերի առկայության դեպքում վարույթ հարուցելու մասին ակտի և վարույթի հետ կապված այլ փաստաթղթերի մեջ չեն նշվում ազդարարման փաստը և ազդարարի անձնական տվյալները:

5. Ազդարարին վնասակար գործողություններից կամ դրանց հետևանքներից պաշտպանելու նպատակով իրավասու անձը կամ մարմինը իր իրավասության շրջանակներում՝

1) ապահովում է տեղեկությունների գաղտնիությունը.

2) ստեղծում է ազդարարի կողմից իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ.

3) ապահովում է ազդարարին արհեստականորեն հանձնարարականներով չծանրաբեռնելը.

4) ապահովում է ազդարարի գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտությունների, անթույլատրելիությունը.

5) անհրաժեշտության դեպքում՝ ազդարարին հնարավորության դեպքում տեղափոխում է այլ աշխատասենյակ.

6) ազդարարին վերականգնում է աշխատանքի.

7) հատուցում է ազդարարի կրած վնասները, այդ թվում՝ իրական վնասը, բաց թողնված օգուտը և ոչ նյութական վնասը.

8) ձեռնարկում է անհրաժեշտ այլ միջոցներ:»: